

Առաջադրանքներ

Համարիչ

Հայտարար

1. Գտիր ուղիղ անկյան $5/9$ մասը:
2. Ինչպիսի՞ անկյուն է 120° անկյունը: Ինչպիսի՞ անկյուն է այդ անկյան $3/4$ մասին հավասար անկյունը:
3. Ինչպիսի՞ անկյուն է 180° անկյունը: Ինչպիսի՞ անկյուն է այդ անկյան $1/2$ մասին հավասար անկյունը:

4. Գտեք 25 և 30 թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:
5. Գտեք 100 և 25 թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

6. Կրճատեք $\frac{6}{14}$, $\frac{25}{100}$, $\frac{50}{75}$ կոտորակները:

7. Գտիր *-ը.

$$\frac{6}{17} = \frac{*}{34}$$

8. Կոտորակների հավասարության պայմանի հիման վրա ստուգեք, թե իրար հավասար են արդյոք կոտորակները.

$$\frac{17}{24} = \frac{34}{48}$$

$$\frac{24}{18} = \frac{6}{5}$$

9. Համեմատեք կոտորակները.

$$\frac{5}{4} \text{ և } \frac{12}{14}$$

$$\frac{6}{17} \text{ և } \frac{6}{18}$$

$$\frac{9}{26} \text{ և } \frac{5}{26}$$

$$\frac{26}{76} \text{ և } \frac{40}{86}$$

$$\frac{86}{90} \text{ և } \frac{20}{92}$$

10. Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

կանոնավոր կոտորակ

$$\frac{*}{10}, \frac{67}{*4}, \frac{*8}{46}, \frac{17}{1*8}$$

անկանոն կոտորակ

$$\frac{76}{*9}, \frac{*8}{*5}, \frac{*6}{85}, \frac{1*7}{138}$$

11. Ժամի ո՞ր մասն է 15 րոպեն:
12. Քանի՞ գրամ է 1/20 կգ-ը:
13. Քանի՞ րոպե է 1/15 ժամը:
14. Հեծանվորդի արագությունը 270 մ/ր է: Որքա՞ն ճանապարհ կանցնի հեծանվորդը 2 ժամում:
15. Կիրառելով բաժանման հատկությունները՝ հաշվումները կատարել առավել հարմար եղանակով.

$$(36 \cdot 32) : 18$$

$$(350 + 700) : 35$$

16. Կիրառելով բաշխական օրենքը՝ հաշվումները կատարել առավել հարմար եղանակով.

$$655 \cdot 35 + 655 \cdot 65$$